ռաջին հանդէսը լոյս ածեց Հնդկաստանում մի հայ քահանայ։

Այսպիսի փառաւոր անցեալի առաջ ի՞նչքան նուազում է հետզհետէ մեր այժմեան վիճակի արժէքը։ Ժամանակ է սթափուելու։ Հայ քահանան թէպէտ և դեռ շատ խոր անկիւններում միակ ուսուցիչն է, սակայն հրապարակից նա սկսել է յետ քաշուել, տեղի տալ իւր ջանքերով առաջ բերած աշխարհական ուսուցչին։ Սա էլ մի մեծ պարծանք է հայ եկեղեցու համար, բայց չմոռանանք, որ մեր ժամանակ ոչ ոք իրաւունք չունի անցեալի փառքերով ապրելու, մեր պարտքն է միշտ դէպի առաջ գնալ և ոչ երբէք կանգ առնել և դէպի յետ նայելով անշարժ մնալ։

Դէպի յետ նայենք միայն նրա համար, որ աւելի ոյժ առնենք առաջներս եղած խոչընդոտներին յաղթելու համար։ Այսօր առաւել ևս քան երբէք կարիք ունինք քահանայութեան—ուսուցչութեան։ Հայ քահանան ոչ կամազուրկ զինուոր է Հռոմի քահանաների պէս և ոչ ծխատէր պաշտօնեայ. նա ուսուցիչ է։ Լաւ հասկանանք մեր պարտքը։

«Գնացէք և ուսուցէք», ասաց մեզ Հրամայող Ձայնը, որին եթէ չլսենք, դատապարտութեան կնիք կրողուենք ճակատներիս։ Մերժելով մերժում ենք մենք այն գրպարտութիւնը, որ հայ եկեղեցին պաշտպան է եղել տգիտութեան և տգէտների։ Այս գրպարտութիւնը մենք կամենում ենք մեծագոյն եռանդի հետևանք համարել միայն։ Հայր տեսնելով որ չէ կարողանում միանգամից հասնել լուսաւոր ազգերին, եռանդի շատութիւնից նորին կայծակ և որոտումն է թափում մի կամ միւս եկեղեցական վարչութեան գլխին, մեղադրելով որ նրանք յառաջ են կոչում տգէտներին։ Բացառիկ դէպքերը չեն կարող օրինակ լինել, պէտք է ամենայն անգամ հիմունքները կշռադատելու ընդունակ լինել, երբ դատաստան ենք անում։ Ահա այս է պակաս մեր եկեղեցական վարիչների քննադատներին։

Մի խնդիր պարզ է մեզ համար այսօր. հայ քահանան պիտի լինի եւ հայ ազգի ուսուցիչը, նախ այդ նրա իրաւունքն ու պարտականութիւնն է եւ երկրորդ՝ հէնց այն պարզ պատճառաւ, որ հայը չէ կարող այլ ուսուցիչ ունենալ եւ չունի իսկ։

Ի՞նչպէս պիտի հասնենք այս ցանկալի վիճակին, ի՞նչ անենք, որ հայ քահանան և իրապէս ուսուցիչ լինի և ոչ անուամբ, ահա մի խնդիր որ պիտի լուծէ եկեղեցական վարչութիւնն ու ժողովուրդը։ Գործով զբաղուել կամեցողները պէտք է այս քննեն և ոչ պարսաւադէտ լինին ու կոյր քարոզիչներ փառամոլ ոգիների մութ նպատակների համար։

Մի երկրորդ խնդիր ևս կայ, որ նոյնպէս նշանաւոր է. ի՞նչ և ի՞նչպէս պիտի ուսուցանեն քահանայք։ Այդ մասին մի այլ անգամ։

## ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑ.

## ՄԱՅՐ ԱԹՈՌ.

### ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԾՆՆԴԵԱՆ ՏԱՐԵԴԱՐՁԸ.

Ապրիլի 4-ին, ազգիս Վեհափառ Հայրապետի, Տ. Տ. Մկրտչի, ամենայն Հայոց Կաթողիկոսի ծննդեան 75-ամեայ տարեդարձի օրը Ս. Էջմիածնի միաբանութիւնը տօնեց մեծաշուք հանդիսով։ Հանդիսաւոր պատարագին, որ արաւ Գերապատիւ Գրիգորիս եպիսկոպոսը, ներկայ էր բոլոր միաբանութիւնը, Ճեմարանն ու ժողովրդի խուռն բազմութիւն։ Վեհափառ Հայրիկն ըստ իւր սովորութեան թոյլ չտուաւ միաբանութեան հայրապետական մաղթանքը Վեհարանում կատարել, այլ զկնի ս. պատարագի, Իջման ս. սեղանի առաջ ներկայ եղաւ հայրապետական սրտառուչ մաղթանքին և ապա բոլոր միաբանութիւնն ու աշակերտներն մերձենալով ի համբոյր Նորին Սրբութեան Աջին, արժանացան հայրապետական յատուկ օրհնութեան։

Զկնի ս. պատարագին Վեհարանում տեղի ունեցաւ աշխարհական շնորհաւորողների ընդունելութիւնը.

Միաբանութեան սեղանատանը հանդիսաւոր ճաշին Նորին Սրբութիւնը հաճեցաւ սեղանակից լինել միաբանութեան. Հայրապետական սեղանին հրաւիրուած էին նաև Գ. Ճեմարանի ուսուցիչներն և հասարակութեան պատգամաւորները.

Վեհափառ Հայրիկի կենաց բաժակն առաջարկեց Բարձր Սրբազն Սիւքիաս Արքեպիսկոպոսը մի իմաստալից ճառով, որից յետոյ Նորին Վեհափառութիւնը հաճեցաւ մի յորդոր խօսելու հանդիսականներին, որոնք յոտնկայս և ակնածութեամբ լըսեցին Հայրապետական յորդորը։ Երեկոյեան հրավառութիւն կար վանքի բակումն և Ճեմարանի շինութեան մէջ ու ընդարձակ բակում։

Վեհափառ Հայրապետի ծննդեան տարեդարձի առթիւ աշակերտական երեկոյթ կար և Ճեմարանում, ուր ներկայ էին ուսուցչական խումբն ու միաբանութեան անդամներից ոմանք. Այս հանդիսին առանձին ոգևորութիւն պատճառեց Հնդկաստանից նոր ժամանած Տէր Թորոս Տուղայեցին, որ մի զգածուած ճառով պատկերացրեց Վեհափառ Հայրիկին իբրև հայ մարդ ու հայ եկեղեցական, երջանիկ համարելով Ճեմարանի սաներին, որ մի այդպիսի մեծ Հովանաւորի խնամքի տակն են զարգանում։

— Վեհափառ Հայրապետի Ծննդեան տարեդարձի առթիւ հայաբնակ վայրերից բազմաթիւ շնորհաւորական հեռագիրներ ժամանեցին։

— Վեհափառ Կաթուղիկոսը հաճեցաւ այդ օրն իսկ արքեպիսկոպոսութեան պատիւը շնորհելու Գերապատիւ Երեմիա եպիսկոպոսին, որ իբրև Ներկայացուցիչ ամենայն Հայոց Կաթուղիկոսի ս. Թագադրութեան հանդիսին, ուղի էր ընկնելու նոյն օրն, Հայրապետական Ներկայացուցչին ի պէտս ծախուց հրամայուեցաւ 3000 ռուբլի տալ Մայր Աթոռիս գանձարանից։

— Հայրապետական շնորհին արժանացաւ և արժանապատիւ Մեսրոպ վարդապետը, որ իբրև Թարգման ուղեկցում է Գերապ. Երեմիա Արքեպիսկոպոսին. հայրապետական կոնդակով Մեսրոպ վարդապետին լանջական խաչ պարգևուեցաւ։

## ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

— Երևանի նոր նահանգապետ Կոմս Տիզէնհաուզէնն ապրիլի 21-ին, կիւրակէ օրը, ժամանեց Ս. Էջմիածին ի տեսութիւն Նորին Վեհափառութեան։ Սիրալիր տեսութիւնից վերջը ի պատիւ պ. նահանգապետի նախաճաշ տրուեցաւ վեհարանում։

— Ապրիլի 27-ին Նորին Վեհափառութեան կողմից այցելութիւն գնացին Երևան պ. նահանգապետին Գերապ. Սարգիս եպիսկոպոսն և Բարձրապատիւ Նահապետ վարդապետը։

## ՆՈՐՈԳՈՒԹԻՒՆՔ ԵՒ ՆՈՐ ՇԷՆՔԵՐ.

— Ազգիս Վեհափառ Հայրապետը ձեռնարկել է արդէն Մայր Տաճարի ներքին վերանորոգութիւն. առ այժմ նորոգում է աւագ դուռն ու սեղանները, Նորին Օծութիւնն ինքն անձամբ է վերահսկում նորոգութեան աշխատանքներին։

— Նորաշէն փռան զուգահեռաբար ընդարձակ անտեսատան և մառանի շինութեան է ձեռնարկուած։

Վեհափառ Հայրապետն Իւր տրամադրութեան ներքոյ գրուած դրամներից 500 ռուբլի է յատկացրել տպարանի յատակը տախտակամածելու և առ հասարակ տպարանի շէնքը յարմարեցնելու համար։

## ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Ամսոյս 23-ին ազգիս Վեհ. Հայրապետը ուղղեց Թագուհի Կայսրուհւոյն՝ Նորին Մեծութեան Անուանակոչութեան առթիւ, մի շնորհաւորական հեռագիր, որին ի պատասխան ստացուեցաւ Յարսկոյէ Սելոյից հետևեալ հեռագիրը.

ԷՋՄԻԱԾԻՆ.
ՊԱՏՐԻԱՐՔ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
Տ. ՄԿՐՏՉԻ

*Խնդրելով ի սրբութենէ Ձերմէ ընդունել զսրտագին շնորհակալիս իմ՝ վասն մատուցեալ շնորհաւորութեանց Ձերոց. յանձն առնեմ՝ զիս սուրբ աղօթից Ձերոց:*

ԱԼԵՔՍԱՆԴՐԱ.

---

Նորին Վեհափառութեան հեռագիրն էր.

ՑԱՐՍԿՈՅԷ ՍԵԼՈՅ
*ՆՈՐԻՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ*
ԹԱԳՈՒՀԻՈՅ ԿԱՅՍՐՈՒՀԻՈՅ ԱԼԵՔՍԱՆԴՐԱ
ՖԷՕԴՈՐՈՎՆԱՅԻ

*Ի մեծահանդէս աւուրս անուանակոչութեան Ձերոյ կայսերական Մեծութեան ընդ համայն հոգեւորական դասու եւ հօտիս՝ մատուցանեմ՝ զամենախոնարհ շնորհաւորութիւնս: Պահեսցէ զՁեզ, ամենաբարեպաշտ Թագուհի, Ամենակարողն Աստուած ի բազում ամս ի բաղդաւորութիւն Արքայական Ընտանեաց եւ յուրախութիւն ամենայն հաւատարիմ՝ հպատակաց Քրիստոսասէր Ռուսիոյ:*

ՄԿՐՏԻՉ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ.

---

Ազգիս Վեհ. Հայրապետը Պարսից Նասր—Էդ-Դին Շահի սպանման լուրը առնելով, հեռագրով պատուիրեց Թեհրանի Փոխանորդ Տ. Սահակ վարդապետին և Թաւրիզի Առաջնորդական Տեղապահ Տ. Յովսէփ վարդապետին յայտնել Պարսից Բարձր Կառավարութեան իւր վշտակցութիւնը՝ դէպի Հայերը ողորմած Շահի եղերական մահուան առթիւ։

Մի այլ հեռագրով էլ Նորին Ս. Օծութիւնը պատուիրեց Ռուսիոյ Մայրաքաղաքաց Հայոց եկեղեցեաց Փոխանորդ Տ. Տիրայր վարդապետին յայտնել իւր վշտակցութիւնը Պարսից դեսպան Միրզա—Րիզա—խանին։

Տ. Տիրայր վարդապետը կատարելով այդ յանձնարարութիւնը, հեռագրով յայտնեց Նորին Վսեմութեան խորին երախտապարտ շնորհակալութիւնը Հայոց եկեղեցւոյ Գլխոյ վշտակցութեան համար, աւելացնելով, թէ նա հաւատացած է, որ Նոր Վեհապետը նոյն բարեացակամութիւնը ցոյց կըտայ դէպի իւր հայ հպատակները, ինչ որ նոքա վայելել են նորա հօր ժամանակ, և հայերը բարօրութեան մէջ կապրին ընդ հովանեաւ Մողաֆար—Էդ-Դին Շահի, Այս մասին Պարսից դեսպանը առանձին հաճութեամբ յանձն է առել հաղորդել Թեհրան։

---

Նորին Ս. Օծութիւնը Թեհրանից Տ. Սահակ վարդապետի հեռագրից տեղեկանալով, որ Պարսից Թագաժառանգ Մողաֆար—Էդ-Դինը Շահ է հրատարակուած, Նորին Մեծութեան ուղղեց հետևեալ հեռագիրը, ապրիլի 23-ին.

Թ Ե Հ Ր Ա Ն
ՆՈՐԻՆ ԱՐԵԳԱԿՆԱՓԱՅԼ ՄԵԾՈՒԹԵԱՆ
ՄՈԶԱՖԱՐ—ԷԴ-ԴԻՆ ՇԱՀՆՇԱՀԻ.

*Հաճեցէք ընդունել զհաստատիս վշտակցութեան Մերոյ ի պատճառս եղերական մահու բարեգործ Նասր Էդ-Դին Մեծի Շահի՝ ծնողի Ձերոյ, եւ զսրտագին շնորհաւորութեանն վասն ամբառնալոյ Մեծութեան Ձերոյ ի գահ փառաւոր նախնեաց Ձերոց: Աղօթեմ՝ առ Աստուած, զի տացէ Ձեզ կեանս երկարս եւ բարեբաստիկս եւ կար՝ առ ի հաստատել փառօք յաւերժայիշատակ ծնօղին Ձերոյ եւ ըստ օրինակի նորին տարածել ըզ սէր եւ զհոգածութիւն Ձեր զհայրական ի վերայ հայ հպատակաց Ձերոց:*

ՄԿՐՏԻՉ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ.

Նորին Մեծութիւն Շահը Թաւրիզից հետևեալ հեռագրով պատասխանեց Նորին Վեհափառութեան հեռագրին.

ԷՋՄԻԱԾԻՆ
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԵԱՆ Տ. ՄԿՐՏՉԻ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ.

*Զգածեալ իմ՝ յանհունս վասն արտայայտեալ անկեղծ զգացմանց եւ կարեկցութեանն, զորս համեալ էիք յայտնել ինձ ի պատճառս դիպուածոյն՝ որ ի վիշտ համակեաց զիս եւ զհաւատարիմ հպատակս իմ, յայտնեմ Ձեզ զիմ շնորհակալիս: Աղաչեմ զԱստուած օգնել ինձ առ ի կատար ածել զխաղաղութիւնս իմ, որք հային յերջանկութիւն եւ ի բարօրութիւն ժողովրդեան իմոյ, զի առանց խաղաղութեան ամենեքին կարող լիցին վայելել խաղաղ եւ անդորր կեանս:*

ՄՈԶԱՖՖԱՐ ԷԴ–ԴԻՆ ՇԱՀ ԿԱՋԱՐ

---

Ամսոյս 27-ին Ռուսիոյ Թագաժառանգի ծննդեան տօնի առթիւ Ազգիս Վեհափառ Հայրապետը Նորին Կայսերական Բարձրութեան ուղղեց հետեւեալ շնորհաւորական հեռագիրը.

ՆԻՑՑԱ (ՖՐԱՆՍԻԱ)
ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԲԱՐՁՐՈՒԹԵԱՆ ԹԱԳԱԺԱՌԱՆԳ ՄԵԾ ԻՇԽԱՆ ԳԷՈՐԳԻ ԱԼԵՔՍԱՆԴՐՈՎԻՉԻ.

*Հաճեցէք ընդունել զանկեղծ շնորհաւորութիւնս իմ: Աղաչեմ զԱստուած պարգեւել Ձեզ կատարեալ քաջառողջութիւն, երկար եւ բարեբաստիկ կեանս եւ բարօրութիւն ի փառս մեծին Ռուսիոյ:*

ՄԿՐՏԻՉ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Նորին Բարձրութիւնը պատասխանեց հետեւեալ շնորհակալութեան հեռագրով, Տիւրբիից.

ԷՋՄԻԱԾԻՆ
ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ Տ. ՄԿՐՏՉԻ

*Ի սրտէ շնորհակալ եմ Ձեզ վասն արտայայտեալ ջերմ բարեմաղթութեանց եւ շնորհաւորութեանց:*

ԳԷՈՐԳԻ.

---

## ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ.

— Գերապատիւ Յովհաննէս եպիսկոպոս Տաթեւացին հայրապետական հրամանով Ս. Էջմիածնից գնաց Սեւանայ վանքը։

— Արժանապատիւ Յովհաննէս վարդապետ Աշտարակեցին կարգուելով Մողնւոյ ս. Գէորգ վանքի վանահայր և գործակալ Ապարանու, տեղափոխուեց իւր պաշտօնավայրը։

— Արժանապատիւ Թովմա վարդապետը Օշականից տեղափոխուեցաւ Ս. Էջմիածին։

— Բլուր գիւղի այրի Տէր Սիոն քահանան վեղար ընդունելով դարձաւ միաբան Ս. Էջմիածնի։

— Հառիճոյ նոր վանահայր արժանապ. Համայեակ վարդապետը աչքերի տկարութեան պատճառով հեռացել է իւր պաշտօնավայրից և գնացել է Թիֆլիզ բժշկուելու։

— Ագուլեաց Թովմայ առաքելոյ վանքի վանահայր Գերապատիւ Գրիգոր եպիսկոպոս Աղափիրեանը ժամանեց Մայր-Աթոռս։

— Արժանապատիւ Գրիգորիս վարդապետ Տէր Ստեփաննոսեան հայրապետական հրամանով թողեց ս. Գայանէի վանահայրութեան պաշտօնը։

— Ապրիլի 6-ին, շաբաթ օրը, Բարձր Սրբազան Սուքիաս Արքեպիսկոպոսը քահանայ ձեռնադրեց ս. Գայեանէի վանքում շնորհունակ Թորոս Զուղայեցի և Երեմիա Ապրիլեան սարկաւագներին։

## Գ. ՃԵՄԱՐԱՆ.

— Գ. Ճեմարանում ուսումը և քննութիւնները շարունակուելու են մինչև մայիսի 10. Արդէն իսկ ապրիլի 8-ից սկսուած են աւարտական քննութիւնները Զ. դասարանում և Գ. լսարանում, Միւս բոլոր դասարաններում և լսարաններում անընդհատ ուսումն պիտի շարունակուի և աշակերտների փոխադրութիւնը տեղի պիտի ունենայ համաձայն տարեկան թուանշանների։

— Ճեմարանաւարտ Յուսիկ վարդապետ Զօհրապեանը, որ անցեալ տարի Նորին Վեհափառութեան դիւանապետն էր և այս տարի ուսուցիչ ճեմարանի դպրոցական դասարաններում, ազգիս Վեհափառ Հայրապետի հաճութեամբ ուղևորուեցաւ արտասահման ուսման մէջ կատարելագործուելու։

— Ճեմարան աւարտած սաներից արժ. Կոմիտաս վարդապետը, որ երգեցողութեան ուսուցիչ էր ճեմարանում անցեալ տարի և այս տարի Թիֆլիզում պ. Եկմալեանին էր աշակերտում, իրաւունք ստացաւ Նորին Վեհափառութիւնից արտասահման գնալու և երաժշտական արուեստում կատարելագործուելու, Հայր Կոմիտաս վարդապետի ուսման ծախքն հոգալ խոստացել է յայտնի բարեգործ պ. Աղէքսանդր Մանթաշեանը, որին այդ առթիւ ազգիս Վեհափառ Կաթուղիկոսն իւր առաքելական օրհնութիւնն հաճեցաւ տալ յատուկ կոնդակով։

— Ճեմարանի սան շնորհունակ Գարեգին սարկաւագը, որ Կով. Հայոց բարեգործական ընկերութեան հաշուով աստուածաբանութիւն է ուսանում Գերմանիայում, այս տարի աւարտելով իւր բարձր կրթութիւնը, պիտի վերադառնայ Ս. Էջմիածին։

## ՏՊԱՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ.

Տպարանի նոր Վարչութիւնն ըստանձնելով Մայր Աթոռիս տպարանի ղեկավարութիւնը՝ հազիւ կարողացաւ ցարդ տպարանիս գոյից ցուցակ կազմել և ուսումնասիրել տպարանի վիճակը, Այս վիճակի ուսումնասիրութիւնն արդէն իսկ զեկուցուած է Նորին Վեհափառութեան, որ մտադիր է այս տարի հոգալ տպարանի թերութիւններն և նախապատրաստութիւն տեսնել Ս. Գրքի տպագրութեան համար, որի հրատարակման նախահաշիւը մերձաւորապէս 30.000 ռուբլու է հասնում։

Տպարանիս ձուլարանի մեքենաներն հնացած լինելով՝ մտադրութիւն կայ նոր մեքենաներ բերելու, որպէս զի հնար լինի տպարանիս բազմաթիւ մայրերից նոր տառեր ձուլելու, Առ այժմ նոր տառեր են ձուլուում առաջիկայ տարուան օրացուցի տպագրութեան համար։

Վեհափառ Հայրապետի հաճութեամբ տպարանիս աշխարհական կառավարիչ պ. Մ. Փափա-

գեանն արձակուեցաւ, որին փոխարինեց շնորհունակ Ղուկաս սարկաւագը։

Ցպարանին կից բացուելիք ընկագործատան բացումն յետաձգուեցաւ։

Նոր Վարչութիւնը կրկնապատկեց իւր ջանքերը վերջացնելու անցեալ տարի սկսուած գրքերի տպագրութիւնն, արդէն լոյս տեսան.

1. Սրբոյ հօրն մերոյ երանելւոյն Գրիգորի Լուսաւորչի ՅԱՃԱԽԱՊԱՏՈՒՄ ՃԱՌՔ ԼՈՒՍԱՒՈՐՔ. Յառաջաբանով, համեմատութեամբ և ծանօթութիւններով Ա. Տ. Միքելեանի. 8. ԺԷ + 354 երես. գինն է 1 ռուբլի։

Այս գիրքն սկսուած էր դեռ 1894 թուին և հրատարակչի տեղից հեռանալու պատճառով կիսատ էր մնացել, ուստի համաձայն ձեռագրին տպագրուեցաւ և լոյս տեսաւ։

Կարծում ենք, որ այսպիսի հրատարակութիւնները հայ հասարակութեան խրախուսանքին կարժանանան։ Սրբոյ Հօրն Մերոյ Լուսաւորչի յաճախապատում ճառերն դարերի ընթացքում հայ քարոզիչների համար ձեռնարկ են ծառայել և այսօր, երբ այդ լուսաւոր ճառերը լոյս են տեսնում Ս. Էջմիածնի հեղինակութեամբ վաւերացած, պէտք է սեղանի գիրք դառնան ամէն մի հայ աշխարհականի ու եկեղեցականի, մանաւանդ որ գրքի գինն եւ իւր ստուարութեան նայելով բաւական աժան է։

2. ՏԵՂԵԿԱԳԻՐ ԳԵՂԱՐՔՈՒՆԻ ԾՈՎԱԶԱՐԴ ԳԱՒԱՌԻ, որ այժմ Նոր—Բայազէտ գաւառ։

Գրեց Մեսրովբ Արքեպիսկոպոս Սմբատեանց Նախիջևանցի. միաբան Ս. Էջմիածնի (1862 թուէն ց1895 Թ.) 8 ԺԱ + 843 երես. գինն է 2 ռուբլի։

Սրբազան Մեսրովբ Արքեպիսկոպոսի գիրքը տպագրութեան էր յանձնուած անցեալ տարի, յաւուրս տեղակալութեան Նորին Բարձր Սրբազնութեան, և աւարտուեցաւ միայն այժմ։ Այս բազմաթերթ հրատարակութեան մէջ բացի տեղագրական, հնագիտական, պատմական, աշխարհագրական և վիճակագրական նիւթերից կան և այլ շատ տեղեկութիւններ, որ նշանակութիւն կունենան ոմանց համար։ Հրատարակութեանս մէջ կան բներագիր տախտակներ, ծաղկանկարներ և ծաղկագրեր։ Գրքիս ստուարութեան մեծապէս նպաստել են բազմաթիւ յաւելուածները և արդէն հրատարակուած նիւթերի արտատպութիւնը։ Թէպէտև բացի Գեղարքունեաց գաւառի տեղեկագրից գիրքս հարուստ է այլատեսակ նիւթերով, բայց դրանցից օգտուելը դիւրացրած է յատուկ անուանց ցուցակով։ Գրքիս մէջ կուտակուած նիւթերի արժանիքն անշուշտ ի վեր կը հանէ քննադատութիւնը, իսկ սրա կազմութեան և լեզուի մասին կարող ենք ասել «le styl c'est l'hommme». Գեր. հեղինակը տուել է այն, ինչ որ կարող էր։

3. ՄԻԱԲԱՆ (Գ. Տ. Մկրտչեան). ԽՈՐԵՆԱՑՈՒ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ. 8 Բ + 84 եր. գինն է 35 կոպէկ։

Այս ուսումնասիրութիւնն արտատպուած էր անցեալ տարեթուերի Արարատներից և այժմ յաւելուած ծանօթութիւններով հրատարակուելով լոյս տեսաւ։ Խորենացու ուսումնասիրութեան խնդիրն այժմեան գրականական խնդիրների շարքում առաջնակարգ տեղ է բռնում, ուստի և բանասէրների համար առանձին արժէք կունենայ այս ուսումնասիրութեանց հրատարակումն։

4. ՊԱՐԶ ՔԱՐՈԶՆԵՐ (ժողովրդական ընթերցանութեան համար). գրեց Էմ. քահ. Նազարեան. Ա. և Բ. գրքոյկ. 8 Զ + 75 և Դ + 92. երես. իւրաքանչիւր տետրի գինն է 15 կոպ.

Ժողովրդական քարոզների կարիքն վաղուց զգացած լինելով այս ձեռնարկութիւնն անմիջապէս յաջողութիւն ունեցաւ. առաջին տետրակն արդէն սպառուելու վրայ է։ Այս տետրերը տպագրուել են ծախիւք Մանուկ աղա Կարապետեանց Տէրիմ Օղլուեանց Արմաւիրեցւոյ։ Ուրախալի է, որ մեր նախնեաց գեղեցիկ սովորութեանն սկսում են կրկին հետևել և հոգալ հոգեշահ գրքերի հրատարակութեան։

5. ՄՕՔՈՍ, ժողովրդական վէպ (Զարասնճագի բարբառով) պատմեց Մինաս բաբար և գրի առաւ Ս. Հայկունի. 8 Ե + 88 երես. գինն է 25 կ.

Այս ժողովրդական վիպասանութիւնը յօրինուած է Ս. Գրիգոր Լուսաւորչի գործունէութեան վրայ և իւր ձևով յիշեցնում է հայկական հին վէպերի կազմութիւնը։ Այս ժողովրդական բանաստեղծութեան գեղեցիկ մնացորդն արժանի է ամէն մի հայ բանասէրի ուշադրութեան, բայց այս մասին մի այլ անգամ կաշխատենք խօսել ամսագրիս գրական բաժնում։ Այս հրատարակութեան ծախքն հոգացել է Սիմֆերոպոլ քաղաքի ճարտարապետ պ. Համբարձում Տէր Յովհ. Կարապետեանցը։

Բացի այս լոյս տեսած գրքերից տպագրւում են և շուտով լոյս կը տեսնեն «Քաղուածի առակները», «Առաքել պատմագիր» և «Պատմութիւն Սասանեան»։

—

ԵՐԵՒԱՆԻ ԹԵՄ.

— Թեմիս փոխանորդ Գերապատիւ Անանիա եպիսկոպոսը հրաժարական է տուել իւր պաշտօնից։ Վեհափառ Հայրապետը հրաժարականն հաճել է ընդունել։

— Թեմական դպրանոցում վերջնական քննութիւններն արդէն սկսուել են և կը աւարտուին մայիսի 10-ին։

— Բարեշնորհ Կիւրեղ վարդապետ Տէր Պետրոսեանը նշանակուած է Հին Նախիջևանի յաջորդ, իսկ Նոր—Բայազետու գործակալ կարգուած է Նորընծայ Սիոն աբեղան։

—

ՎՐԱՍՏԱՆԻ ԹԵՄ.

— Հաղբատի վանահայր կարգուեցաւ արժանապատիւ Գեղամ վարդապետը։

— Ներսիսեան դպրոցում զատկից անմիջապէս յետոյ սկսուել են քննութիւններն և կաւարտուին մայիսի 10-ին։

— Ներսիսեան դպրոցի նոր շէնք կառուցանելու համար հոգաբարձութեան առաջարկութիւնը չարժանացաւ Վեհափառ Հայրապետի հաւանութեան։

—

ԱՍՏՐԱԽԱՆԻ ԹԵՄ.

Թեմական Առաջնորդ Բարձր Սրբազան Արքե-

տակէս Արքեպիսկոպոսը Հայրապետական հրամանով Ս. Պետերբուրգ հասնելով՝ կատարեց Նորին Վեհափառութեան յանձնարարութիւնը և մայիսի սկզբին պիտի ուղևորուի Մոսկուա ս. թագադրութեան հանդիսին ներկայ լինելու։ Արիստակէս սրբազանի առ Վեհ. Հայրապետն ուղարկած զեկուցումից երևում է, որ եկեղեցական—ծխական բոլոր դպրոցները պիտի փակուին և սեպտեմբերին չպիտի վերաբացուին։

—

## ՏԱՃԿԱՀԱՅՔ·

Անցեալ տարուան կոտորածների մասին կրկին ստացանք սրտաճմլիկ նկարագիրներ, որոնց մէջ առանձին նշանակութիւն ունին հանգուցեալ Խաչատուր Աղթամարայ կաթուղիկոսի վերջին տեղեկագիրը և Եդեսիոյ կոտորածների սոսկալի նկարագրութիւնը, որոնց հրատարակութիւնը թողնում ենք առաջիկային։

— Տաճկահայ եկեղեցականութիւնն երկու բարձրաստիճան ներկայացուցիչներից զրկուեցաւ. Երուսաղեմայ Ս. Պատրիարքի փոխանորդ Գերապատիւ Սէֆերեան արքեպիսկոպոսն և Եդեսիոյ առաջնորդ Խորէն արքեպիսկոպոսը վախճանուեցան։

— Ուրախութեամբ արձանագրում ենք այն փաստը, որ Բ. Դրան և Հայոց պատրիարքարանի յարաբերութիւններն վերսկսուել են և մի քանի առաջնորդական փոխանորդներ արդէն ստացել են իրենց բ ե ր ա թ ն ե ր ն և ուղևորուել իրենց պաշտօնավայրերը։

— Վերջին ժամանակներս եւրոպական թերթերից ոմանք մի անհեթեթ լուր հրատարակեցին, որ իբրև թէ ամենապատիւ Ս. Պատրիարքը ձգտում է միաբանութիւն (unia) հաստատել Հռովմի պապի հետ, պարտք ենք համարում հերքել այդ լուրը որպէս անտեղեակ մարդկանց մտքի ծնունդ. Այդպիսի միաբանութիւն հաստատելը Հայաստանեայց եկեղեցու կանոններով վեր է որ և է հոգևոր պետի իրաւասութիւնից և Սրբազան Իզմիրլեանն այն անձն չէ, որ այդպիսի ձեռնարկութիւններ սկսէ, Հայրապետական Դիւանը, որ անընդհատ յարաբերութիւն ունի Կ. Պոլսի պատրիարքարանի հետ, ոչ մի այդպիսի տեղեկութիւն չէ ստացել, Հայաստանեայց եկեղեցին սովոր է նահատակուել, բայց ոչ երբէք շեղուել իւր աւանդութիւններից։

## ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ·

### ԹԱՂՈՒԱԾՔ Ի ԿՈՆԴԱԿԱՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Կոնդակք հմրոք. 412, 413, 414, յանուն Աբրահամ քահանայի Սպանդունեայ Դէրբէնդ քաղաքի, Աւագ քահանայի Աշարեան Ղուբա քաղաքի և Խորէն քահանայի Գալստեան Ղօշունլի գեղջ, որոց շնորհեցաւ իրաւունս կրել զլանջախաչ քահանայական, ըստ միջնորդութեան Գեր. Տ. Մակար եպիսկոպոսի առաջնորդի Շամախւոյ։

Կոնդակ յանուն Դաւիթ քահանայի Քէշիշեան Հին Խրիմ քաղաքի հմր. 411, որով շնորհեցաւ նմա իրաւունս կրել զլանջախաչ քահանայական ըստ խնդրանաց ժողովրդեան և ըստ միջնորդական վկայութեան կառավարչի թեմին, բարձրապատիւ Տ. Յուսիկ վարդապետի Մովսիսեան։

Կոնդակ յանուն առաջն. Աստրախանի Գեր. Արիստակէս Արքեպիսկոպոսի հմր. 419, վասն գնալոյ ի Ս. Պետերբուրգ և բանակցելոյ ընդ տ. Նախարարի ներքին գործոց զխնդրոյ դպրոցաց։

Կոնդակ յանուն Ամեն. Պատրիարքին Կ. Պոլսոյ Տ. Մատթէոս Արքեպիսկոպոսի համարաւ 449. վասն ընդունելոյ զդարձեալսն վերստին ի ծոց ս. եկեղեցւոյ։

Կոնդակ յանուն Ս. Սինօդի հմր. 451, վասն որոշելոյ ճանապարհածախս Գեր. Երեմիա արքեպիսկոպոսի և արժ. Մեսրովբ վարդապետի, ի գնալ ի Մոսկուա որպէս ներկայացուցիչ Վեհ. Հայրապետին ի ժամ ս. թագադրութեան Նորին Կայսերական Մեծութեանց։

Կոնդակ յանուն միաբանի Մայր Աթոռոյ Տ. Մեսրովբ վարդապետի Տ. Մովսէսեան հմր. 467, որով շնորհեցաւ նմա լանջախաչ վարդապետական ականակուռ։

Կոնդակ յանուն Նախագահի Սինօդի Գեր. Երեմիա եպիսկոպոսի հմր. 468, որով շնորհեցաւ նմա պատիւ արքեպիսկոպոսութեան։

—

### ԹԱՂՈՒԱԾ ՅՕՐԱԳՐՈՅ ՍԻՆՕԴԻ ԿԱԶՄԵԼՈՅ Ի 18 ՄԱՐՏԻ 1896 ԱՄԻ

Հրամայեցին. պատուէր տալ Հոգևոր կառավարութեան Հայոց Աղէքսանդրապօլի յորդորել զժողովուրդն ներքին Գանլիջայ գեղջ տալ քահանային իւրեանց Տէր Մկրտչի զհող հերկելի և զտեղի բնակութեան ըստ խոստման իւրեանց, իսկ զՄովսէս քահանայն Երեմեանց դարձուցանել ի տեղի պաշտաման իւրոյ յԱղէքսանդրապօլ, յանձնելով զհսկողութիւն մատրան ս. Պետրոսի և Պօղոսի և Անիցն ս. Ստեփաննոսի Մարմարաշէն նոյն Մկրտիչ քահանային ըստ պայմանին տալոյ Երեմեանց քահանային, յորմէ և ընկալեալ զդրամս և զնուէրս ժողովեալս մինչ ցարդ, հանդերձ ժապաւինեալ մատենիւ մատուցանել Սինոդիս։

Անդամ Սինօդի՝ Արիստակէս Եպիսկոպոս

Գործավար Գ. Սմբատեան

—